ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 2.2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ԷԱՃԱՊՁԲ-2026/03**

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՃԴ-ԷԱՃԱՊՁԲ-2026/03** ծածկագրով գնման ընթացակարգով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխության համառոտ նկարագրությունը՝

Փոփոխություն 1 առաջացման պատճառ՝ Պատասխանատու ստորաբաժանման զեկուցագրի համաձայն՝ Հրավերի տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն՝ ՃԴ-ԷԱՃԱՊՁԲ-2026/03 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգին» կատարված հղումը, որոշման ուժը կորցրած լինելու պատճառով, փոխարինվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 826 որոշմամբ հաստատված «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին և մազութին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին (ՄՄ ՏԿ 013/2011) կատարված հղմամբ:

Փոփոխության հիմնավորում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ կետ:

Փոփոխության արդյունքում հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 16.11.2026 թվականի ժամը 16:00:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՃԴ-ԷԱՃԱՊՁԲ-2026/03** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Շալունցին:

Հեռախոս՝ 010 308 100
Էլ. Փոստ՝ procurement@armroad.am

ՃԴ-ԷԱՃԱՊՁԲ-2026/03 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով:

ОБЪЯВЛЕНИЕ
о внесении изменений в приглашение

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№ 2.2 от 5-го ноября 2026 года
и публикуется в соответствии со статьей 40 Закона Республики Армения "О закупках"

Код процедуры **CHD-EAAPDzB-2026/03**

Причины внесения изменений в приглашение к электронному аукциону, объявленному в рамках процедуры закупки с кодом **CHD-EAAPDzB-2026/03**, организованной с целью приобретения бензина для нужд Фонда «Дорожный департамент», и краткое описание внесённых изменений.

Причина изменения 1: Согласно докладу ответственного подразделения — необходимость внесения изменений в техническую характеристику Приглашения.

Описание изменения: В технической характеристики процедуры закупки с кодом **CHD-EAAPDzB-2026/03** ссылка на «Технический регламент моторных топлив», утверждённый Постановлением Правительства Республики Армения от 11 ноября 2004 года № 1592-Н, в связи с утратой данным постановлением силы, заменена ссылкой на Технический регламент Таможенного союза ТР ТС 013/2011 «О требованиях к автомобильному и авиационному бензину, дизельному и судовому топливу, топливу для реактивных двигателей и мазуту», утверждённый Решением Комиссии Таможенного союза от 18 октября 2011 года № 826.

Обоснование изменения: Пункт 4 статьи 40 Закона РА «О закупках».

В результате внесенного изменения, крайним сроком подачи заявок установлено 16.11. 2026 года, 16:00.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии под кодом **CHD-EAAPDzB-2026/03 Армине Шалунц**.

Телефон: 010 308 100

Электронная почта: procurement@armroad.am

Оценочная комиссия процедуры под кодом **CHD-EAAPDzB-2026/03**.